ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության ավագ մասնագետի (ծածկագիրը՝ 92-1.6-Մ4-1) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության ավագ մասնագետի (ծածկագիրը՝ 92-1.6-Մ4-1) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.

-Բարձրագույն կրթություն

-Աշխատանքային փորձ՝

Հանրային ծառայության մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ.

- **Գործառույթները՝**

- մասնակցում է ՏԻՄ-ի լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության ամենամյա աշխատանքային ծրագրի նախագծի կազմման աշխատանքներին և համայնքներում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներին.
- իրականացնում է համայնքային ծառայության պաշտոնների գրանցամատյանի վարման, համայնքային ծառայողների վերապատրաստման խմբերի կազմավորման, թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների և ատեստավորումների նշանակման օրերի հաշվառման, համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող և պաշտոնից ազատված անձանց վերաբերյալ տեղեկությունների ամփոփման և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնելու աշխատանքները.
- առաջարկություն է ներկայացնում վարչության պետին՝ մարզպետի կողմից ՏԻՄ-ի ընտրություններ նշանակելու վերաբերյալ.
- մասնակցում է մարզի տարածքում անցկացվող հանրապետական, տեղական նշանակության ընտրությունների, հանրաքվեների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման աշխատանքներին, ՏԻՄ-ի՝ պետության պատվիրակած լիազորությունների կատարման ընթացքի աշխատանքներին.
- մասնակցում է համայնքային ծառայության ոլորտում տարվող աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնելու աշխատանքներին.
- մասնակցում է համայնքային ծառայության վերաբերյալ առաջարկությունների, քաղաքացիների առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկումներին և դրանց ընթացք տալուն.
  - առաջարկություններ է ներկայացնում Վարչության պետին տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, գործողությունները և անգործությունը մարզպետի կողմից դատարանում բողոքարկելու վերաբերյալ,
  - առաջարկություններ է ներկայացնում Վարչության պետին մարզի աշխարհագրական օբյեկտների անվանափոխման և անվանակոչման փաստաթղթերն աշխարհագրական օբյեկտների անվանումների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացնելու վերաբերյալ:

- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2022թ. մարտի 4-ը ներառյալ:

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերի պատճենները իսկականի հետ միասին.

- դիմում /լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.
- անձնագիր
- դիպլոմ
- աշխատանքային գրքույկ կամ աշխատանքային ստաժի վերաբերյալ անհատական հաշվի քաղվածք
- արական սեռի անձինք նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասի կցագրման վկայականի պատճենը.
- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի

Աշխատավարձը կազմում է 150,799 դրամ (մեկ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր իննուսինը դրամ):

Դիմում ներկայացրած քաղաքացիների ընտրությունը կատարելու է տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը՝ հարցազրույցի միջոցով:

Տվյալ որոշակի ժամկետով թափուր պաշտոնի վերացման ժամկետը՝ հիմքի վերացումը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ կամ փաստաթղթերն ուղարկել անձնակազմի կառավարման բաժնի էլեկտրոնային հասցեով՝ aragatsotn.andznakazm@ mta.gov.am

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից մինչև 13:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝
0232 35383